ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2020թ-ՎԱԿԱՆԻ N 7-Ա

ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ-ի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» N 389-Ն որոշումը, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, ավագանին *որոշում է.*

1. Կարևորել Տաթև համայնքում արոտավայրերի կառավարման ապահովումը և ներդնել արոտի կայուն կառավարման ապահովման համար պահանջվող ընթացակարգեր:
2. Տաթև համայնքում արոտավայրերի կայուն կառավարման ապահովման համար կազմավորել աշխատանքային խումբ, որը կապահովի համայնքի մակարդակով արոտավայրերի կառավարման
գործընթացի կազմակերպումն ու վարումը՝ համաձայն հաստատված ընթացակարգի՝ համայնքի բնակավայրերի համար հաստատված Արոտավայրերի կառավարման պլանների:
3. Հաստատել համայնքային աշխատանքային խումբը հետևյալ կազմով՝

1) Մուրադ Սիմոնյան (համայնքի ղեկավար)
2) Մուշեղ Հովսեփյան (համայնքի ղեկավարի տեղակալ)
3) Ջամբուլաթ Հովհաննիսյան (համայնքի ղեկավարի օգնական)
4) Սեյրան Հովհաննիսյան (համայնքաի աշխատակազմի քարտուղար)
5) Սևակ Գառնիկյան (ավագանու անդամ)
6) Սարգիս Հայրապետյան (ավագանու անդամ)
7) Գառնիկ Մկրտչյան (ֆերմեր)
8) Արկադիա Վարդազարյան (ֆերմեր)
9) Սեդրակ Հակոբյան (Արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվի անդամ/նախագահ, գ. Հարժիս)
10)Համլետ Համբարձումյան (Արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվի անդամ/նախագահ, գ.Շինուհայր)

11)Սեդրակ Վարդանյան (Արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվի անդամ/նախագահ, գ.Տաթև)

4. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ համայնքում արոտների կառավարման պլանների գործարկման վերահսկման, ինչպես նաև դրանց թարմացման համար սահմանել պատասխանատու անձ, ով նաև կհամակարգի ձևավորված աշխատանքային խմբի ոլորտային գործունեությունը:

5. *[Տարբերակ 1]* Տաթև համայնքի բնակավայրերում արոտավայրերի կայուն կառավարման գործընթացի ապահովման համար կազմավորել աշխատանքային խմբեր՝ համաձայն Հավելված 1-ի: Աշխատանքային խմբերը կապահովեն տվյալ բնակավայրում արոտային ժամանակահատվածի կազմակերպումն ու մշակված արոտօգտագործման օրացուցային գրաֆիկներին համապատասխան կայուն արոտօգտագործումների իրականացումը՝ ըստ հաստատված ընթացակարգի (Արոտավայրի կառավարման պլան): Բնակավայրի մակարդակում ձևավորված աշխատանքային խմբի ոլորտային գործունեության համակարգումը վերապահել տվյալ բնակավայրի վարչական ղեկավարին:

6. *[Տարբերակ 2]* Տաթև համայնքի բնակավայրերում արոտավայրերի կայուն կառավարման գործընթացի ապահովման համար յուրաքանչյուր բնակավայրի վարչական ղեկավարին վերապահել տվյալ բնակավայրում արոտային ժամանակահատվածի կազմակերպումն ու մշակված արոտօգտագործման օրացուցային գրաֆիկներին համապատասխան կայուն արոտօգտագործումների իրականացումը՝ ըստ հաստատված ընթացակարգի (Արոտավայրի կառավարման պլան):

7. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր,Տաթև, Խոտ, Հարժիս, Հալիձոր, Սվարանց,Տանձատափ և Քաշունի բնակավայրերի արոտավայրերի կառավարման պլանները համաձայն կից հավելվածների:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ ՀԱՅԿ

ԳԱՌՆԻԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐՏԻՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՄԱԹԵՈՍՅԱՆ ԳԵՍԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ԳՈՒԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՈՒՐԱԴ ՍԻՄՈՆՅԱՆ